№ 151 ՇԱԲԱԹ 12 ՅՈՒԼԻՍԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 12 ՅՈՒԼԻՍԻ № 151

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Соломоновская ул., № 21.
TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-Ի ՑՈՒՑԱԿԻ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պատիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թ. տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ԶՐԻՒԲԱՐ կը ստանան հետեւեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրթանէս։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ռեբեկա Կարապետեան Մինասեանց, Եղիսաբէթ Յովհաննիսեան և Արշակ Սերգէյեվիչ Սաղաթէլեանցներ, Տիրոնի Կարապետեան Գալստեանց և Ազնիւ Կարապետեան Պարոնեան իրանց զաւակներով խորին կսկիծով յայտնում են ազգականներին և բարեկամներին իրանց սիրելի և անմոռանալի՝ առաջինի դստեր, երկրորդի քրոջ, երրորդի քենու, իսկ վերջինների քրոջ աղջկայ՝

Թագուհի Յովհաննիսեան ՄԻՆԱՍԵԱՆՑԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ յուլիսի 9-ին կէսօրվայ ժամը 3-ին Միխայլովսկայում։ Ամփոփքը ամենայն օր, երեկոյեան ժամը 6-ին։ Յուղարկաւորութիւնը Միխայլովսկից դէպի ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կիրակի օրը յուլիսի 13-ին, ցեր. ժամը 1-ին։ Թաղումը Սուրբի հայոց գերեզմանատանը։
702. 1—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Ներժանացած մեծ պարկեր։ Վաճառվում են ՌՈՒՍԱՅ ՊԵՏՈՒԹԵԱՆ բոլոր յայտնի քաղաքներում։
Փաբրիկային իսկական գներով։
Պահեստում միշտ կարելի է ձեռք բերել մեծ քանակութեամբ բազմատեսակ պատառներ վերջին ոճի, ինչպէս էմանագիններ, նոյնպէս և թանգարժէքներ։ Բացառապէս լրիւ չափսի է 11¼ արշ. երկար։
Սկզբունքով հեռու պահելով իրան քաղաքական բնոյթ կրող որևէ ձգտումից, մինչ այն ատիճան, որ Միութեան կանոնադրութեամբ՝ քաղաքական կուսակցութիւններին պատկանող անձինք չեն կարող պաշտօնավարել Միութեան մէջ, Միութիւնը ձգտում է հաստատել բարոյական սերտ կապ երկրագնդի երեսին ցրված հայկական հատուածների միջև։ Այդ նպատակով, հա դրեթէ բոլոր հայաբնակ վայրերում, բացի Ռուսաստանից։ Այստեղ ևս ճիւղեր ունենալու համար Միութիւնը իր ներկայացուցիչների միջոցով աշխատում է վերջին երկու տարին և նոյնիսկ, ինչպէս գիտենք, գործը փութացնելու համար, ուղարկել է այժմ իր լիազորին, դոկտոր Ն. Տաղաւարեանին, որ այստեղ իր միսսիան աւարտելուց յետոյ՝ անցնելու է Թիւրքաց Հայաստան, մի քանի անտեսական և կուլտուրական ուսումնասիրութիւններ կատարելու համար։
Եւ որովհետև՝ շնորհիւ փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից խոստացված աջակցութեան՝ յոյս կայ, որ Միութիւնը շուտով կունենայ ճիւղեր և կովկասում, ռուսահայերն ևս կարող կը լինեն կազմել մի օղակ բարոյական միութեան և շաղկապի այն շղթայի մէջ, որ այժմ, շնորհիւ Միութեան, կազմվել է երկրագնդի հայութիւնից։
Սակայն ամեն մի բարի և օգտակար գործ միշտ ունենում է իր հակառակորդները և չարամիտ մեկնաբանողները։ Որոշ քաղաքական մի կուսակցութեան դուր չէր կարող գալ Միութեան ուղղութիւնը, որ ձգտում է լինել զուտ մարդասիրական և բարոյական-կուլտուրական, ուստի և սկզբում եղան ջանքեր խոչընդոտներ յարուցանելու Միութեան զարգացման դէմ. այդ ջանքերը թէև այժմ ևս լինում են, բայց Միութիւնը բարոյապէս և նիւթապէս այնքան ուռճացել է, որ այդ չարամիտ ջանքերը հանդիպում են ժայռերի և խորտակվում, և Միութիւնը յաղթական կերպով առաջ է տանում իր ընթացքը։ Այդպիսի չարամիտ ջանքերի արդիւնք պէտք է համարել և այն լուրը, որ վերջին օրերը հակառակորդ հոսանքի թերթերը տարածեցին և շպրտեցին իբրև յանդիմանութիւն Միութեան երեսին, թէ դիմանութիւն Միութեան երեսին, թէ նպատակ ունի միայն հանգանաստ նպատակ ունի միայն հանգանաստ կութիւն սկսել ռուսահայերի մէջ իր օգտին և այդ՝ այն ժամանակ, երբ Երևանի նահանգի հայութիւնը ենթարկված է աղէտի և կարօտ է օգնութեան։ Այդ թելադրանքները միանգամայն անհիմն են։ Միութիւնը, ուղարկելով դոկտոր Տաղաւարեանին Կովկաս և ձգտելով բանալ ճիւղեր ռուսահայերի մէջ, ընաւ նպատակ չէ ունեցել հանգանակութեան դիմելու և ստանալու ռուսահայերից դրամական օգնութիւն, առանց իր կողմից նոյն օգնութիւնը հայթայթելու ռուսահայերին, ինչպէս յանդիմանում են թելադրիչները։ Ոչ, Միութիւնը ոչ միայն միայն չէ ունեցել ռուսահայերից դրամական օգնութիւն խնդրելու, այլ ինքն, ինքնաբերաբար, նոյն իսկ իր գոյութեան առաջին շրջանում, ռուսահայերին օգնելու տրամադրութիւն և կամք է ցոյց տուել և հասցրել է դրամական օժանդակութիւն ռուսահայ աղէտեալներին։ Այսպէս, օրինակ, հայ-թուրքական ընդհարումների ժամանակ՝ Միութիւնը ուղարկել է մի խոշոր գումար, այն ժամանակվայ իր միջոցների հետ համեմատած, Ամենայն Հայոց Կաթողիկոս Երիմեանին՝ Նպատակամատոյց Յանձնաժողովին յանձնելու համար։ Այժմ ևս, ինչպէս գիտենք, Միութիւնը փոխադրել է 3000 ր. Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Երևանի նահանգի այս տարվայ հայ աղէտեալների օգտին, և այդ էլ այն ժամանակ, երբ ռուսահայերը իրանք դեռ ոչ մի կոպէկ չեն տուել։
Միութիւնը հաւատարապէս հասցնում է իր օգնութիւնը բոլոր երկիրների հայ աղէտեալներին, առանց դաւանութեան խտրութեան։ Միութիւնը ձգտում է գլխաւորապէս բարոյական կապ և համերաշխութիւն հաստատել բոլոր երկիրների հայերի միջև և լցնել այն մեծ վիհը, որ բացվել է հայութեան առաջ քաղաքական կուսակցութիւնների սերմանած վնասակար և քայքայիչ երկպառակութիւնների պատճառով, և այդ՝ այն ժամանակ, երբ մեծ պէտք ունենք այդ համերաշխութեան՝ կարենալու համար առաջ քշել տալ մեր պահանջները և ցանկութիւնները ըէֆորմների վերաբերմամբ։
Մենք համոզված ենք, որ Ռուսաստանի հայութիւնը, տեսնելով Միութեան օգտակար և ազդաշէն գործունէութիւնը, ապագայում ինքն ինքնաբերաբար նրա միջոցով կը հայթայթէ իր օգնութիւնը Թիւրքիայի հայութեան քաղաքակրթական վերածնութեան գործի համար։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԳՈՐԾԱԴՈՒԼ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—(Պաշտօնական)։ Քաղաքապետի գիւանատան տեղեկութիւնների համաձայն, յուլիսի 9-ի առաւօտեան գործի չեն կանգնել գործարանային ձեռնարկութիւնների և ապարանների 120,000 բանւորներ, որոնց թւում և էլեքտրաքարշի ծառայողները։ Սակաւաթիւ վագոններ գործում են քաղաքապահ ոստիկանների ղեկավարութեան ցոյցեր կազմելուն կարմիր դրօշակներ բարձրացրին, յեղափոխական երգեր երգեցին։ Ոստիկանութիւնը ուզեց ցրել նրանց, բայց բանւորները ընդդիմացան նրանց և քարեր շպրտեցին ոստիկանների վրա, որից յետոյ ոստիկաններն ստիպված եղան զէնքի դիմելու։ Հէլանդանոց ուղարկվեցին 2 բանւոր, որոնք վիրաւորվել են կրծքից։ Երեկոյեան դէմ գործադուլաւորները դարձեալ փորձեցին ցոյց կազմել։ Ոստիկանների միջամտութեան ժամանակ, բանւորները քարեր արձակեցին նրանց վրա։ Ոստիկանութիւնը զէնքի դիմեց և այդպիսով ցրեց ցուցարարներին։ Բացի այդ՝ ցուցարարները ուզեցին այրել Սամսոնիևսկի կամուրջը և քանդել Ջրհան մեքենաները։ Վիբորգեան կողմում։ Երեկոյեան դէմ ստացված տեղեկութիւնների համաձայն, Պետրոպաւլովսկի հիւանդանոցն են տարվել մի մեռած և 3 վիրաւորված բանւոր, որ վնասվել են ընդհարման ժամանակ. Գեօրգիևսկի հիւանդանոցն են տարվել 4 մեռած, 2 ծանր և 2 թեթև վիրաւորված բանւորներ, որոնք մօտ 20 տարեկան երիտասարդներ են։ Օրվայ ընթացքում բանւորները յարձակվեցին մեկնակ անցորդների վրա, որոնց մի քանիսին լուրջ վիրաւորել են։

ՄՕՍԿՎԱ.—Դրաշարների մի-օրեայ գործադուլի հետևանքով լոյս չը տեսան «Русскія Вѣдомости», «Рус. Слово», «Раннее Утро» և «Голосъ Москвы» թերթերը։

ՐԻԳԱ.—Գործի կանգնեցին 35,000 գործադուլաւոր բանւորներ։ Նաւահանգստի ծառայողների գործադուլը շարունակվում է։ Խոշոր միջադէպեր չը կան։

ՆԻԿՕԼԱԵՎՍԿ (Խերսօնի նահ.).—Գործադուլ արին նաւաշինական ընկերութիւնների 8000 բանւորներ, որոնք գործարանից դուրս գալու ժամանակ երգում էին յեղափոխական երգեր և կարմիր դրօշակ բարձրացրին։ Զօրքի և բանւորների միջև տեղի ունեցան ընդհարումներ։ Կան վիրաւորներ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 յուլիսի

ՊԱՐԻԶ.—Տիկ. Կայօյի դատավարութիւնը շարունակվում է։ Ցուցմունքներ է տալիս տիկ. Գէյդան, Կայօյի առաջին կինը։ Նա խիստ կերպով յարձակվում է տիկ. Կայօյի վրա, ասելով որ Կայոն նրա զոհն է, և յայտնում է, որ ստիպված է եղել ձեռք բերել Կայօյի՝ ներկայ կնոջն ուղղած նամակները, որպէս զէնք ապահարզանի դէպքում, և վճռապէս հաստատում է, որ մտադրութիւն չէ ունեցել նամակները Կալմէտին յանձնելու։ Բուռն տեսարաններից յետոյ, որ տեղի ունեցաւ լաբօրիի, քաղաքացիական պահանջը ներկայացնողի և վկայուհիների միջև, տիկ. Գէյդան առաջարկում է լաբօրիին նամակները յանձնել նրա կարգադրութեան։

ԴՈՒԲԼԻՆ.—Պետութիւնների ներկայացուցիչները ապստամբներին պատասխանեցին, որ, իրանց պետութիւնների հետ նախօրօք չը բանակցելով, չեն կարող գնալ Շեակ՝ խորհրդակցութեան։

Եկան ռումինական 240 կամաւորներ։

ԴՈՒԲԼԻՆ.—Ցուլիսի 9-ին պետութիւնների դիպլոմատիական ներկայացուցիչները նոր նամակներ ստացան ապստամբներից, որոնց մէջ նրանք խնդրում են, յանուն արիւնհեղութեան դադարեցման՝ հեռացնել պրինց Վիդին։ Նամակի պատճէնը ուղարկվել է Վիդին։

ԼՕՆԴՈՆ.—Լրագիրները ենթադրում են, որ կուսակցութիւնների ներկայացուցիչների կոնֆերենցիան հօմրուլի հարցի մասին նպատակին չի հասնի, որովհետև կուսակցութիւնները համաձայնութեան հող չեն կարող գտնել Ուլստերի շրջանների վերաբերմամբ։

ԼՕՆԴՈՆ.—Ցուլիսի 10-ին նորից հաւաքվեց կոնֆերենցիան հօմրուլի հարցի մասին։ Նիստը շարունակվեց երկու ժամ, յետոյ Ասկվիտը ընդունվեց թագաւորի մօտ։

ԼՕՆԴՈՆ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ յուլիսի 11-ին նորից կայանալու է կոնֆերենցիան։

ԹԱՒՐԻԶ. — Հանդիսաւորապէս տօնվեց շահի թագադրութիւնը։ Առաւօտեան 53 անգամ թնդանօթ արձակվեց, շահի անուան տաճարի թափ համեմատ։ Եղան ընդունելութիւններ։ Ռուսական աւագ հիւպատոս Օրլով ճառ արտասանեց։ Երեկոյեան նահանգապետը ճաշ տուեց։ Քաղաքը լուսաւորված էր։ Մէջ քաղաքներում նոյնպէս հանդէսներ եղան։

Կ. ՊՕԼԻՍ.—Մինիստրների խորհուրդը որոշել է պարլամենտի նստաշրջանը երկարաձգել երկու շաբաթով։

ՍԻԲԻՆ.—Գնացքում ձերբակալվեցին ռումինացի 30 ուսանող՝ Ունգարիայի հասցէին վիրաւորական արտայայտութիւններ անելուն համար։

ՐԵՆԶԱՆ.—Շոգեկառքից թռած կայծերից բռնկվեց Եկատերինան անտառը։ Զօրք է կանչված հրդեհը հանգցնելու։

ՔԻՇԻՆԷՎ.—Բեսարաբիայի չորս գաւառում կարկուտը 200,000 ռուբլու վնաս է հասցրել։ Կայծակը սպանել է 5 մարդ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՊԷՏՔ Է ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆԱՑՆԵԼ

—

Գաւառների բնակիչները կարծես դատապարտված լինեն միակերպ և անմխիթարական կեանքի։ Կան շատ տեղեր, ուր մարդիկ կատարելապէս չեն ստանում հոգեկան ոչ մի զուարճութիւն, ոչ մի էստետիքական բաւականութիւն։ Ահա այսպիսի պայմանների մէջ գաւառական քաղաքներում թատրոնն ունի մի առանձին հասարակական նշանակութիւն։

Բայց պէտք է ցաւելով խոստովանել, որ մինչև այժմ մեր մայրենի բեմը չը դիմեց իր յատուկ նպատակներին, չը ձգտեց իր ազդեցութիւնը տարածել մեր հասարակութեան բոլոր խաւերում։

Ինչպէս մամուլը գոյութեան կռւում իրաւունք ունենալու համար պէտք է անընդհատաբար իր ամբողջ բարոյական ոյժը քաղէ ժողովրդական կեանքից, ժողովրդի կենսական պահանջներից և ապա ձևակերպելով իր մտքերը ազնիւ կերպով առաջնորդէ ժողովրդին, այնպէս էլ թատրոնը պէտք է միշտ հետազօտէ ժողովրդին և շօշափելով բեմի վրա հասարակական առօրեայ կենսական խնդիրներ՝ լուծել ջանայ այդ խնդիրները։ Մինչև որ մի ազգի թատրոնը ինքնուրոյն ստեղծագործող չը դառնայ, ապա երբէք հասարակական կրթիչ դեր չի կարող խաղալ նոյն ազգի հասարակական կեանքում։ Գլխաւոր խնդիրը մեզ համար այն է, որ մեր թատրոնի վարիչները պէտք է շնորհք ունենան թատրոնը հայ հասարակութեան, մանաւանդ գաւառացիների համար անհրաժեշտ պահանջ դարձնելու նպա՝ մեր թատրոնը իր բեմբերտուարով համեմատաբար շատ քիչ է շօշափում հասարակութեան մեծամասնութեան համար առօրեայ կենսական կարևոր խնդիրներ և ապա այնպէս թանգ է նստում այցելողներին, որ երբէք երազել անգամ չէ կարող ժողովրդական թատրոն դառնալ, ինչպէս և անհրաժեշտ պահանջ դառնալ մեր հասարակութեան մեծամասնութեան համար։

Ամենից առաջ՝ պէտք է թատրոնական բեմբերտուարը դարձնել ամենքին մատչելի և կենսական հարցերին համապատասխանող և ապա գաւառներում թատրոնի մուտքի գինը այնքան պիտի պակասեցնել, որ այդ վճարը ծանր բեռ չը լինի թէ անշանակութիւնը։

Գաղափարը անհատների սեփականութիւն չէ, առաջադիմելու իրաւունքը ամենքին է պատկանում։ Ահա այբբենական մի ճշմարտութիւն, որ հարկաւոր է յիշեցնել առհասարակ մեր հանրական գործերի այն վարիչներին, որոնք գործերին այնպիսի կերպարանք են տուել, որ կարծէք անուղղակի կերպով ասում են ժողովրդին՝ «այնտեղ քո տեղը չէ, այդ քո բանը չէ»։

Եթէ հայոց թատրոնը նախանձելի պայմաններում չէ կարողանում ապրել, դրա պատճառն այն է, որ այդ թատրոնը—մեր խօսքը գլխաւորաբար գաւառի մասին է—ժողովուրդը չէ յաճախում, այլ յաճախում է միշտ միևնոյն շրջանի, մինչև անգամ մարդկանց մի յայտնի փոքրաթիւ խումբ, իսկ հասարակութեան մեծամասնութիւնը մինչև այժմ էլ չէ տալիս թատրոնին նոր յաճախողներ և միշտ հեռու է մնում թատրոնից։ Ժողովուրդը չէ կարող զէթ տարէնը մի անգամ իր ընտանիքը թատրոն տանել, ուր մտնելու համար 8—10 ր. պէտք է վճարել և ուր բեմի վրա ներկայացնում են այնպիսի բաներ, որ նա տեսնել չը տեսնէ միևնոյն է։

Շուշի Օր. Վիկտորիա Դաւթեան

ՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

Անցաւ ամարային արձակուրդներից մէկ ամիսը, շուտով կանցնի նաև յուլիսը։ Մեր դպրոցական գործը սակայն դեռ որոշ վիճակի մէջ չէ։

Թեմ. տեսուչն էլ հեռացաւ իր պաշտօնից. երեք տարի նա գործեց իբրև թեմ. տեսուչ, սակայն մեր դպրոցական գործը նոյն դրութեան մէջ է. ոչ մի քայլ դէպի կանոնաւորութիւն։ Այսպէս եթէ շարունակեն նաև ապագայում մեր դպրոցական ղեկավարները, կը մնանի մեկանում ազգային դպրոցի գաղափարը։ Մենք ազատ ենք կառավարելու մեր դպրոցական գործը, և հէնց այդ ազատութիւնը գալիս է ոչնչացնելու ամեն ինչ։ Տուէք հայերիս ազատութիւն օրէնքի գործում, և ամեն տեղ կը տեսնէք յետադիմութիւն։

Վատթար է նաև ուսուցչութեան վիճակը։ Ամենքը հանգստանում են, իսկ հայ ուսուցիչը, սկսած համալսարանականից մինչև վարժապետը, բոլորն էլ նահատակվում են։

Մի տեղ երբ կայ հիւանդութիւն, խոց, այդ խոցը պէտք է կարել։

Դպրոցական կեանքը խոցերով է ծածկված, և բուժող չը կայ։ Գրում են բոլորն էլ և այդպէս ոչինչ չի օգնում. մեղադրում են մէկը միւսին. սկսած ճեմարանի ուսուցիչներից մինչև գիւղական վարժապետը յարձակվում են, միջոցներ են մտածում, բայց անօգուտ են բոլորը։

Դպրոց պահելու համար հարկաւոր է դրամ. իսկ երբ կարգուկանոն չը կայ, ոմ կը տայ այդ դրամը։ Անցեալներում խոսակցութիւն կար Ներսիսեան դպրոցի ուսուցիչների և տեսչի մասին. մեղադրում են նուռունցին, որ խիստ է, պահանջկոտ է և ուսուցչական խումբը հոլու հպատակ է նրան։ Եւ ինչ. բողոքում ենք անկարգութեան դէմ։ Իսկ երբ գալիս է կարող մէկը և կարգուկանոն մտցնում, մենք բողոքում ենք կարգուկանոնի դէմ...

Այս է իրականութիւնը։ Բուր-Ժուլ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Նորութիւններ Սղնախից

Սղնախ, 7 յուլիսի

Կարկուտը մեծ չարիք է գիւղական ազգաբնակութեան համար։ Անհրաժեշտ է գիւղացու դառն աշխատանքը ապահովել բնութեան այդ դաժան արհաւիրքից։ Սրա համար եւրոպացիները հնարել են կարկուտի դէմ մաքառող թնդանօթներ և հիմնել են կարկուտից ապահովագրող ընկերութիւններ։ Մօտ օրերս Սղնախում կայացաւ Սղնախի գաւառի գիւղատնտեսների ժողովը կարկուտի դէմ միջոցներ առնելու համար։ Ժողովում խօսվեց, թէ ինչ միջոցներ են ստեղծված Եւրոպայում և Ռուսաստանում կարկուտի դէմ։ Ժողովն որոշեց կուռել կարկուտի դէմ սահմանված թնդանօթներով և այդ թնդանօթները շատ տարածել գիւղերում ու հիմնել կարկուտից ապահովագրող ընկերութիւն, որպէսզի վնասվածները օգնութիւն ստանան այդ ընկերութիւնից։ Սրա համար ընտրվեց յանձնաժողով, որը պէտք է մանրամասն ուսումնասիրէ այս հարցը, կանոնադրութիւն կազմէ և ապա առաջարկէ ընդհ. ժողովին։

Այս օրերս երկու վրացի եղբայրներ Աւլաղանի դաշտից գնում են Ուզունդարա կոչված տեղը իրանց խոտերի դէզերը դիտելու։ Վերադարձին նրանք նստում են Ուզունդարայի խանութում, լաւ քէֆ են քաշում, արբում և ապա գնում։ Ճանապարհին երբ նրանք մօտենում են իրանց անտառին, եղբայրների միջև վէճ է ծագում անտառի մասին և դաշոյններով սկսում են խփել իրար։ Մէկ եղբայրը դաշոյնով խփում է միւս եղբօր վզին և սպանում է նրան։

Երկարատև անձրևների պատճառով խաղողի վրա երևացել է միլդիու (բորբոսանք) հիւանդութիւնը։ Անհրաժեշտ է այդմների բժշկութիւնը։ Ն. Ն.

Կեանքը Շահալիում

Շահալի (Լօռու գաւ.), 7 յուլ.

Շահալին բաղկացած է 150 տնից, ունի մի կիսակիսբ քահանայ։ Գիւղացիք պարապում են անասնապահութեամբ, մեղուաբուծութեամբ, հողագործութեամբ։ Օգտվում են գլխաւորապէս փայտագործութիւնից՝ իրանց շնորհված սեփական 5—600 դեսեատին անտառից։ Գիւղացիք ընդհանրապէս հարուստ են, ունեն միդասեան ժողովրդական դպրոց մի ուսուցչով, իսկ ծխ. դպրոցի հակայ շէնքը, որ կառուցված է մօտ 15 տարի առաջ, տակաւին չէ վերջացած և կիսատ մնալով՝ գիւղացոց անփութութեան, անմիաբանութեան պատճառով քայքայվում է...

Գիւղը գտնվում է Կարսի երկաթուղու Շահալի կայարանից երկու վերստ հեռաւորութեան վրա և շրջված է զառիվայրի լանջին. օդը զով, կլիման անտառային։ Գիւղը թէև շրջակայքում ունի սառը և քաղցրահամ աղբիւրներ, բայց օգտվել չէ կարողանում, բաւականանալով իր գիւղամիջում գտնված մի անհամ աղբիւրով։

Շուտ-շուտ կրկնվող պարբերական անձրևները խանգարում են ցորենի և խոտի հնձերին, որով և վնասվում է գիւղացիութիւնը։ Կարս. Ղազարեան

Անհոգութեան ենթակայ խմելի

Թօլագիրան կայարան, 7 յուլիսի

Ներսիսեան դպրոցի աշակերտները, ուսուցիչ Ա. Աբեղեանի առաջնորդութեամբ, վերադառնալով Անիից, դիտեցին պղնձահանքերը և հէնց նոյն օրը անցան Սանահին, իսկ միւս օրը ճանապարհվեցին դէպի Թիֆլիս։

Լօռին իր չքնաղ բնութեամբ դէպի ինքն է ձգում շատ հեռուներից հովեկների, որոնց թիւը՝ համեմատած անցեալ տարիների հետ՝ աւելի շատ է, բայց մի բան, որ Լօռի գիմող ամեն ճանապարհորդի դժգոհութեան առիթ է տալիս, այդ այն է, որ Թօլագիրան կայարանից մինչև Զալալ-Օղլի ձգվող խճուղային ճանապարհը խիստ անյարմար է։

Ցոնված ճանապարհորդը Թօլագիրան հասնելով ընկնում է անվերջ տանջանքների մէջ և այդ գիշեր նա ուզէ-չուզէ կայարանին մօտ գտնված խանութում պէտք է անցկացնէ, որովհետև կառապանները առարկում են՝ «Խաղէին ճանփէն ցեխ է և գշերը ձիան դուս չեն գնայ»։ Եւ իրաւ, ճանապարհի մեծ մասը իջեցնում, ոտքով են տանում, բայց ձիերն էլի չեն կարողանում առաջ գնալ, որովհետև ճանապարհը դեռ ևս քար չէ ածված, անհաւասար, տեղ-տեղ քանդված, ջրով լցված է, այնպէս որ՝ 2—3 ժամվայ ճանապարհը անցնելը տևում է 5—7 ժամ։ Այդ էլ դեռ բաւական չէ՝ կառապանները վերցնում են այնքան, որքան ցանկանում են։

Ահա և ձեզ Թօլագիրանից Զալալ-Օղլի տանող խճուղային ճանապարհի յարմարութիւնները։ Շ. Կ.

Դարուն նոր է գալիս

Նոր-Բայազէտ, 7 յուլիսի

Մեր զարունը կարծէք նոր է գալիս։ Գեղածիծաղ բնութիւնը իր հոգեպարար եղանակների հետ միասին իր հրաշալիքներն է թափում ամենուրեք։ Նա, բնութիւնը իր գողոցգոլոտարը, իր զուարթութեամբ թեթևաշարժ մանուկի պէս կայտառում է և խայտալով անհոգ ելթերից սլանում է դէպի երկի մակերևոյթը, որ կանաչ մանուրով զգեստաւորված մի հրաշալի լանդշաֆտ է ներկայացնում և նայողի տեսքը գրաւում...

Անհոգ է բնութիւնը իր այդ գեղեցկութեան մէջ... Բայց մարդիկ, օ՜հ, ծանրաբեռնված իրանց հոգսերով, չեն զգում բնութեան քաղցրութիւնները, որ այնքան առատորէն թափված են երկրիս վրա, մարդկութեան շուրջը, վասնզի մարդիկ դեռ ևս չեն սթափվել ամենական այն դժնդակ դրութիւնից, որը ամեն կողմից քայքայել է նրանց, չեն աղատվել այն ծանր կօշմարից, որի ծանրութեան ներքոյ տարիներով ճընշվել է նրանց սիրտն ու հոգին, նրանց ֆիզիկական և նիւթական դրութիւնը։

Սակայն յոյս կայ, որ այս տարվայ բնութեան պարգևատրութիւնը ամբողջապէս կամաքէ նրան—մեր ժողովրդին—և կը հանէ նրան այն սուղ կացութիւնից, ուր տարիների հոգսը կաշկանդել է նրան։ Այդ է մեր յոյսը, մեր ապաւէնը՝ տարվայ այս փարթամ օրերին և հրաշալի եղանակներին... Ցուսանք, գարունը նոր է գալիս։

Ոսսորդ

ԲԱԳՈՒԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Յուլիսի 7-ին Բալախանի-Սաբունչի բաւարարում, նախկին պայման երով գործի սկսեցին հետևեալ նախաձեռնութիւնների բանւորներից. 40 հոգի Եւրոպական Նաւթարդիւնաբերական Ընկ. մէջ, Ռուսական Ընկ. 79 հոգի և Կասպի-Զերնօմօրեան Ընկ. 230 բանւորներից գործի են կանգնել 15 հոգիս։

«Կավկազ և Մերկուրի» Ընկ. մէջ գործի են ձեռնարկել 145 բանւոր նախկին պայմաններով։

—

Մի քանի գործարաններում, արդիւնաբերներում և արհեստանոցներում նորից գործադուլաւորներին միացել են սակաւաթիւ բանւորներ։

—

Յուլիսի 9-ին, Բիսկովի և Լեսպինի մեխանիկական գործարաններում գործադուլ արին 66 հոգի։

—

Վերջին օրերը նուազել է նաւթարդիւնաբերական գործադուլաւոր բանւորների գործերի քննութիւնը։ Նախանցեալ օրը վճիռ հանվեց արտաքսելու «Ռունօ» ֆիրմայի 141 և «Կաղբէկ» ֆիրմայի 5 բանւորներին։

—

Յուլիսի 16-ին, գաւառի հաշտարար դատարանի քրէական բաժանմունքում քննվելու է նաւթարդիւնաբերական 105 բանւորի դատը, որոնք մեղադրվում են 1358-րդ յօդուածով։ Բանւորներին պաշտպանելու է երդ. հաւ. Տրդաթեան։

—

Ինչպէս յայտնի է, ներքին գործերի սրբոյրը օգտվելս գոս. Հուսկովսկի եկել է Բագու։ Նրա գալու նպատակն այն է, որ տեղում պարզի գործադուլի դրութիւնը և պատճառները և միջոցներ մշակի արդիւնարանների կեանքը նորմալ դրութեան մէջ դնելու։

Մայրաքաղաքի ռուսական թերթերը յայտնում են յայտնում, որ գեն. Զուսկովսկին կարող կը լինի ազդել թէ նաւթարդիւնաբերների և թէ բանւորների վրա, հարթել այն միջադէպը, որ խանգարել է արդիւնաբերական նորմալ կեանքը։

ՎՕԼԳԱՅԻ ԱՓԵՐԻՑ

II

Անցեալ յօդուածումս ի միջի այլոց շեշտեցի այն հանգամանքը, որ Աստրախանից գնացող շոգենաւերը լեփ լեցուն են ամբարանոց գնացողներով. այո, աստրախանցիները ևս սովորեցին ամարանոցային կեանքին...

Բայց դժբաղդաբար այդպէս չէր սրանից 10—15 տարի առաջ. աստրախանցիները ձմեռվայ իրանց չարքաշ աշխատանքից, նստակաց կեանքից յետոյ՝ ամառներն էլ մնում հոսում էին իրանց սիրելի քաղաքում՝ դիմանալով նրա անտանելի շոգերին և վատառողջ լիմային։

Ամառները դուրս գալու սովորութիւնը—աստրախանցիների համար խորթ երևոյթ էր։

Հատ ու կէնտ մարդիկ—ուսուցիչներ, բժիշկներ, փաստաբաններ և հարուստներից մի քանիսները—ահա ամառները դուրս եկողները։

Իսկ այժմ... այժմ ահա մի քանի տարիներ է, որ աստրախանցիք ևս զգացել են ամառները դուրս եկնելու անհրաժեշտ բաւականութիւնը...

Նրանք ևս զգացել են գոնէ ամառները, թէկուզ կարճ ժամանակով, հոգեպէս և ֆիզիկապէս թարմանալու, դրսի աշխարհից տպաւորվելու, ճանապարհորդութիւններ կատարելու անհրաժեշտութիւնը և օգուտները...

Զգացել են, որ մարդու ամբողջ տարվայ լարված դրութեանը հանգիստ պէտք է տալ և ապրել, մտածել և զգալ այնպէս և այն չափով, ինչպէս որ մարդ ինքն է կամենում։

Մի խօսքով՝ ապրել սեփական կամքով։

Ասում եմ՝ զգացել են այդ բոլորը մեր աստրախանցիները և ամառը լուսանալուն պէս՝ մտածում են քաղաքից հեռանալու մասին։

Այդ երևոյթի վրա սաստիկ զարմանում են ծերունիները, պառաւ կանայք։

— Այս տարի խօ բաւական հով է, էլ ինչ դաչաս։

— Լսեցէք, այս ինչն էլ այս տարի գընում է. էլ հարուստ ու աղքատ չը կայ։

— Էհ, անկարգութիւն անելու են գնում։

Ահա այն կարծիքները, որ շարունակ լսվում է դրանցից։

Թող ծերունիները ինչ կուզեն ասեն. բայց այսօր ևս ուրախութեամբ եմ արձանագրում աստրախանցիների այդ երևոյթը։

Ամառները ճանապարհորդելը և հանգստանալը անհրաժեշտ սովորութիւն պէտք է դառնայ ամեն մարդու համար, մանաւանդ աշակերտութեան և այն ծնողների համար, որոնք ունեն ուսանող երեխաներ. ամբողջ տարվայ լարված մտաւոր աշխատանքից և մանաւանդ տանջալի քննութիւններից յետոյ, պէտք է հանգիստ տալ և թարմացնել այդ փոքրիկ ուղղները։

Եւ ամեն մէկը մեզանից, ով գէթ մի փոքրիկ հնարաւորութիւն ունի ամառները դուրս ելնելու, թող գնա ուրիշ երկիրներ, ուրիշ աշխարհներ, թող նորանոր տպաւորութիւններով և ուսումնասիրութիւններով թարմացնի իր աշխարհահայեացքը, իր մըտաւոր հորիզոնը և ապա թարմ ոյժերով, անսպառ եռանդով վերադառնայ և սկսի իր ձմեռվայ աշխատանքը...

Ս. ք. Սալանեան

Աստրախան

ԱՆՀԵՏԱՑՈՂ ՀԱՑ ԴԱՂՈՒԹԸ

Եւ այդ դաղութը Թէոդոսիան է։

Արդարև, երբ մարդ ձեռքն է առնում անցեալի պատմութիւնը և սկսում է թերթել, իսկոյն գալիս է այն համոզմունքին, որ մօտ ապագայում վերջակէտ է դրվելու՝ Ղրիմի թերակղզում ապրող հայերի—գլխաւորապէս Թէոդոսիայի հայ դաղութի—գոյութեանը։

Հ. Մ. Բժշկեանի գրած՝ «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» գրքի մէջ կարդում ենք, որ երբ Անիից դաղթած հայերը 1330 թ. վերջնականապէս բնակութիւն հաստատեցին Ղրիմի թերակղզում, շինեցին 1000 եկեղեցի. իսկ իրանք կազմում էին 100,000 ընտանիք-տուն. ահա այդ մասին այսպէս է գրում Ղրիմ գաղթող հայերի պատմագիր՝ Վրթանէս վ.

«... Ապա բազումք թողլով զոսկեզօծ պալատս, զծաղկաւէտ դաշտս, զվանօրայս և զեկեղեցիս աւեր, չուեալ եկին որպէս փախստական ի Ճախսարայ, որ է ի մէջ Հաշտարխանու և Ղազանու. ոմանք գնացին ի Զուղա, ոմանք ի Վան և այլք ի Սիս։ Եւ որք Ճախսարայ եկին, հրաման առեալ ի թաթար խանէն բնակեցան անդ ոչ բազում ժամանակս, որ էր զայս ՉԽԸ (1299) թուին. վասն զի մինչ նեղեալ եղեն ի թաթարացն, դեսպան յղեն ի Դուխմ առ իշխանն Չինխիզաց, որ բնակէր ի մէջ Ծանկիհիսարին Թէոդոսիու. ուստի գնեն ընդ իշխանին Թէոդոսիու, ելեալ ի Ճախսարայէ իշխանք և ազնուք և հասարակ ժողովուրդք վառեալք զինու պատերազմիւով ընդ թաթարացն ճեխքեալ գան ի Դուխմ. և բնակին ի Թէոդոսիա, ի Կաղարաթ, և ի Սուրխաթ, և ի կողմանս սոցա. այս եղև ՉԽԹ (1330) թուին։ Ցայնժամ զօրացաք մեք և բազմացաք և շինեցաք զգիւղս և զդաւառս. իշխանք և ազնուականք ի Ղարաբազարէն սկսեալ մինչև ի Սուրխաթ և ի Թէոդոսիա, ի լերինս և ի դաշտս լի արարին վանօրէիւք և եկեղեցեաք սրուչս ի Սուրխաթ։ Եւ շինեցաք տունք 100,000, և զեկեղեցիս 1000, և ի ամէն հոնականաց պարսպեցին ի քաղաքն Թէոդոսիա...» և այլն։

Իսկ այժմ եթէ ամբողջ թերակղզու հայ ընտանիքները հաշուելու լինենք, կը ստանանք մի անհաւատալի թիւ, այն է՝ ոչ ամբողջ տասնհինգ հազար հոգի։

Ինչպէս ասացինք, Ղրիմի թերակղզուն հայ դաղութը հիմնվեց 1299 թուականին։ Ինչպէս ասում է Հ. Մ. Բժշկեանը, Ղրիմի թերակղզուն հայերը եկան Անիից։ Ինչպէս գիտենք, Անիի հայերը 1319 թուականին դաղթեցին Սեբաստիա, Կարին, Ամասիա, Թոքատ, Սեբաստիայի գաւառ, Ղարահիսար, Ամասիայի գաւառ, Ղարաբազարէն մինչև Սուրխաթ։ Ինչպէս տեսնում ենք, Անիի հայերը դաղթեցին Ղրիմ 20 տարի առաջ։ Ինչպէս ասում է Հ. Մ. Բժշկեանը, Ղրիմի թերակղզուն հայերը 1330 թուականին հաստատեցին 1000 եկեղեցի. իսկ իրանք կազմում էին 100,000 ընտանիք-տուն։ Ինչպէս ասում է Հ. Մ. Բժշկեանը, Ղրիմ դաղթող հայերի պատմագիր՝ Վրթանէս վ. ասում է, թէ Ղրիմ դաղթող հայերը 1299 թուականին հաստատեցին 1000 եկեղեցի

ւելի քան հազար տուն։

Մենք կանգ առնենք հենց այժմեան Թէոդոսիայի վրա։ Երբ 1772 թ. յունիսի 29-ին Ղրիմը վերջնականապէս անցաւ ռուսաց ձեռքը, հենց Թէոդոսիա քաղաքում կար 24 հայ եկեղեցի և 500 տնից աւելի հայ ընտանիք. իսկ այժմ՝ այն 24 եկեղեցուց մընացել են կանգուն միայն 4-ը, որոնցից 2-ն էլ համարեա կիսակործան դրութեան մէջ են, իսկ հայ ընտանիք՝ ոչ աւելի քան 140 տուն, որոնց կէսը համարեա կազմում են թիւրքահայեր ու պարսկահայեր և կամ կովկասահայեր, որոնց մեծամասնութեան պարապմունքը մանր առուտուրն է և կանգան տեսակի արհեստը։

Ճշմարիտ է, նոյն թուերին Ղրիմից գաղթեցին դէպի Դոն գետի ափերը մօտ 1300 տուն հայեր, բայց Թէոդոսիայի մէջ դարձեալ մնաց 3-400 տուն հայ ընտանիք։ Արդ՝ ինչ եղան մնացած հայերը, մի՞թէ դաւանափոխ եղան, կամ առևտրական գործերով մի այլ տեղ փոխադրվեցին, որ այսօր գաղութում մենք տեսնում ենք ընդամենը 130 տուն, որոնց կէսը՝ ինչպէս ասացինք՝ կազմում են եկեղեցիները։

Գալով ազգ. առանձնայատուկ սովորութիւններին, մայրենի լեզուին, կրթական-կուլտուրական մասին, պէտք է ասել, որ երբ Թէոդոսիայում գոյութիւն ունէր հայկական տպարանը, Խալիպեան միջնակարգ դպրոցը, սեփական լրագիր ու առաջնորդական աթոռը, դեռևս այդ ժամանակ Կովկասի ամենահայաշատ վայրերում գոյութիւն չունէր դրանցից և ոչ մէկը, և իսկապէս այն ժամանակ մեր այժմեան Թէոդոսիան Ղրիմի ամբողջ թերակղզու համար հանդիսանում էր մի Բիւզանդիա, մի Աթէնք։ Դա մեր տաղանդաւոր հայկաբան Գաբրիել արքեպիսկոպոսի և իր եղբայր՝ աշխարհահռչակ ծովանկարիչ Ց. Այվազովսկիի շրջանն էր, որոնք ապրում էին Թէոդոսիայում։

Իսկ այժմ, այդ բոլորի փոխարէն, երբ մի այցելու մտնում է Թէոդոսիա, նրա աչքին իսկոյն կերևայ՝ Խալիպեան մեծահռչակ դպրոցի խարխուլ շէնութիւնը, երբև լուռ վկայ իր անցեալ փառքի. թէև նկարների գալերէան մտնող այցելուն կը հիանայ և հոգեպէս ու մտաւորապէս կը վերանայ՝ տեսնելով տաղանդաւոր նկարչի վրձինի ստեղծագործութիւններն ու հրաշակերտութիւնները, որոնք այժմ անցել են քաղաքին։

Խալիպեան դպրոցի հետ միաժամանակ գոյութիւն է ունեցել հայոց այժմեան եկ. ծխ. երկսեռ մի դասական դպրոցը, որի բացման թուականը ինձ չաջողվեց իմանալ. այնու ամենայնիւ հաստատ կարելի է ասել, որ յիշեալ ծխ. ուսումնարանի գոյութիւն ունենալը կը լինի ոչ պակաս քան յիսուն տարի, գուցէ և աւելի։ Բայց այդ պատկառելի կէս-դարեան ժամանակաշրջանում մը-տաւոր ինչ է տուել տեղիս հայ համայնքին յիշեալ դպրոցը, որի վրա տարեկան ամենաքիչը ծախսվում է 1500 ր.։ Տուե՞լ է գոնէ հենց հոգի, որ այսօր նրանք կարո-

---

նում։ Դա արևելագիտութեան պահանջն էր, որ կառավարութիւնը ուզեց բաւարարել ճեմարանի միջոցով։

Երբ Անդրկովկասի նշանաւոր մասը 1827—29 թ. ռուս-պարսկական պատերազմով միացաւ ռուս պետութեան և դարձաւ նրա ծայրերկիրներից մէկը, անհրաժեշտութիւն առաջ եկաւ կարգաւորել այդ նոր երկիրը պետական օրէնքներով, վարչական, դատաստանական, ռազմական, կրթական, առևտրական, արդիւնաբերական և այլ հիմնարկութիւններով, հաստատութիւններով ու ձեռնարկութիւններով, այդ նոր երկիրը ներքին կապերով շղթայելու պետութեան հետ և նրա անբաժան մասը դարձնելու։ Այս գործունէութիւնը առաջ էր բերում տեղական կեանքին ծանօթ ու հմուտ, սովորութիւններն ու լեզուները իմացող մարդկանց մեծ պահանջ, որ ընդհանուր առմամբ կոչվում էր արևելագիտութեան պահանջ։

Սակայն այս հասկացողութեամբ կառավարութեան ըմբռնմամբ՝ արևելագիտութիւնը տարբեր էր այն արևելագիտութիւնից, որ Լազարեան ճեմարանի նպատակներից մէկն էր կազմում։ Կառավարութիւնն «արևելագիտութիւն» ասելով հասկանում էր արևելեան լեզուները գործնականապէս իմացող մարդկանց, որ կարող էին այդ երկիրներում պաշտօնավարել, ժողովրդի և կառավարութեան յարաբերութեան շրջանում միջնորդի և թարգմանի դեր կատարել։ Այն ինչ՝ ճեմարանի արևելագիտութիւնն իր ընդարձակ ծաւալով ի նկատի ունէր ուսումնասիրել Արևելքը, յատկապէս Հայաստանը, դրա անցեալն ու ներկան։ Եթէ հայկական դաւառները ճեմարանի արևելագիտութեան մէջ առաջին տեղը պիտի բռնէին, կառավարութեան ծրագրով կը շօշափվէին այն չափով, որքան կարիք կը լինէր գործնական կեանքում։

Կառավարութիւնն իր այս գործնական արևելագիտութեան պահանջին բաւարարութիւն տալու ձգտումով առանձին հաստատութիւն էր ստեղծել «Արևելեան մասնաժողով» անունով. դրան էր յանձնված արևելագիտութիւն տարածելու հոգը։ Այդ մարմինը մի կողմից հսկում և կանոնաւորում էր արևելագիտութեան աւանդումն այն հիմնարկութիւնների մէջ, ուր անցնում էին այդ գիտութիւնը, միւս կողմից հիմնում նման հաստատութիւններ։

Լազարեան ճեմարանը, ուր աւանդվում

դանան իրանց անունն և ազգանունները դրել առանց տառասխալի։

Մայրենի լեզուն, որ այս կողմերի համար գոնէ անհրաժեշտ է և դա է, որ համարվում է մի օղակ՝ այս շրջանի հայերին միմեանց հետ միացած պահպանելու համար, այդ ևս մոռացութեան տրվելու վրա է։ Տեղացի թէ եկուոր, հարուստ թէ աղքատ, մեծ թէ փոքր՝ խօսում են ռուսերէն լեզուով։

Անցեալի մնացած շինութիւնների ջարդված ու կործանված բեկորների, քանդված մի քանի պարսպապատերի, բազմաթիւ ջարդ ու կոտոր եղած խաչքարերի և մի քանի այլ փոշոտ ու անուշադիր թողած աւարկաների վրա եթէ տեղիս հայութիւնը շատ թէ քիչ դեռ մատների արանքով նայում է, այն էլ շնորհիւ այն հանգամանքի, որ հարիւրաւոր մղոններ գալիս են օտարազգի հնախոյզներ Ղրիմ՝ ուսումնասիրելու նպատակով, և ամբողջ թերակղզին այդպիսի այցելուներին կարողանում է տալ մի առատ հնագիտական նիւթ. դա հայկականն է և ա՛յցելի հայերին է պատկանում։

Մի խօսքով՝ ինչ որ թանգագին է ու ազգային, արդէն անհետանալու, ոչնչանալու վրա է, չը նայած որ այդ բոլորի կոստահան համար ոչ մի կողմնակի շարժառիթ չը կայ, ինչպէս, օրինակ, նախկին դարերում, երբ հայը ենթարկված էր միշտ հալածանքների։

Այս կոստաբեր երևոյթների շարքում պակաս դեր չէ խաղում և օտարների հետ խառն կեանք վարելը, կամ օրինական ամուսնութիւնը, որ հասել է այն ասիճանին, որ կարելի է համարձակ ասել՝ «չէք խաբեր ոչ հրեի և ոչ հեթանոսի»...

Տեղիս ծխ. դպրոցը, որ կենսական ամենահրաժեշտ պահանջի չափ նշանակութիւն ունեցող մի հիմնարկութիւն է, ահա երկու տարի է, որ գտնվում է անօրմալ և քաոսային դրութեան մէջ, մանաւանդ հայոց լեզուն, շնորհիւ անձեռնհաս ուսուցչի։

Թէոդոսիա Կ. ս. Արգարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Մեզ հաղորդում են, որ ճեմարանի ուսուցչական խումբը գրեթէ ամբողջովին կազմված է։ Ուսուցիչների թւում հայագիտութեան առարկաների համար լսարաններում հրաւիրված է Ս. Մալխասեանցը։ Տեսչի մասին դեռ վերջնական ընտրութիւն չէ եղել։ Դիւանապետ Բագրատ եպիսկոպոս, որ կաթողիկոսի հրամանով եկել էր Թիֆլիս յուլիսի 1-ին՝ ուսուցչական խումբ կազմելու և յարմար տեսչացու, որոնցից այս երկու օրս կը մեկնի Էջմիածին։ Ցոյս կայ, որ տեսչի ընտրութեան հարցն ևս բարեյաջող ելք կունենայ։

◆ Ամսիս 10-ին, էլեքտրաքարշի ծառայողների գործադուլի երկրորդ օրը, ոստիկանական ծառայողների զինավարութեամբ էլեքտրաքարշի մի քանի գծերի վրա գործում էին մօտ 9 հատ էլեքտրա-

---

էին արևելեան լեզուները, իր վրա է հրաւիրում յիշեալ մարմնի ուշադրութիւնը։ 1844 թ. մասնաժողովը այցելում է ճեմարանը և գտնում անբաւարար դրութեան մէջ, որ ընորոշում է հետևեալ կէտերով. նախ՝ արևելեան լեզուները չեն աւանդվում ցանկալի չափով և իրանց նպատակին հասնում։ Երկրորդ՝ ուսանողութիւնը մեծ մասամբ ձգտում է դէպի Մոսկվայի համալսարանը, ուր և մոռանում է այդ լեզուներն և ընտրում այնպիսի կոչում, որ չի ըընդխում ճեմարանի նպատակից։ Երրորդ՝ ճեմարանը չի վայելում լրիւ այն իրաւունքները, որոնք տրվել են գիմնազիաներին, նոյնիսկ Թիֆլիսի գիմնազիային և այլն։ Այս ամենով մասնաժողովը գալիս էր ասելու, որ ճեմարանը անկարգ դպրոց էր։ Նրան չէր կարելի դնել պետութեան մէջ ընդունված կրթական հիմնարկութիւնների շարքը։ Նա ոչ միջնակարգ դպրոց էր և ոչ քարձրագոյն, ոչ ընդհանուր կրթական և ոչ մասնագիտական։

Այս ամենը ինչպէս ունենալով՝ մասնաժողովը գալիս է մօտաւորապէս հետևեալ որոշման. յարմար է գտնում ճեմարանը դարձնել մասնագիտական դպրոց՝ լիցէօն՝ բարձրագոյն դպրոցի իրաւունքներով և 8 տարվայ դասընթացքով։ Վեց տարի դասական բաժնին է յատկացվում, երկու տարի բարձր մասնագիտականին, ուր աւանդվելու էին արևելեան լեզուները. վերջինները աւանդվելու էին և դասարաններում։ Դրանով կառավարութիւնը ազատ կը լինէր առ այժմ նորանոր ծախքերից, արևելագիտութեան համար նոր-հիմնարկութիւն կառուցանելու հոգսից. յանձին ճեմարանի կը լրանար այդ պահանջը։ Մասնաժողովի դիտողութիւնը, եզրակացութիւնը և կազմած ծրագիրն ուղարկվում են ճեմարանի կառավարչապետ Օրլովին ի գիտութիւն և լուսաւորութեան մինիստր Ս. Ս. Ուվարովին՝ արտայայտելու իր կարծիքը։ Մինչ լուսաւորութեան մինիստրը բոլորովին անյարմար ու անհամապատասխան է գտնում այդ ծրագիրը մանկավարժական տեսակէտից և առաջարկում իր կողմից մի նոր ծրագիր, կառավարչապետ Օրլովը կատարեալ միանում է մասնաժողովի կարծիքներին։ Ճեմարանի վատթար դրութիւնը՝ կրթական մասի վերաբերեալ ի հարկէ՝ նա էլ աւելի խստացնում և առաջարկում է, որ կառավարութիւնը մի առանձին անձ ևս

քարշ։ Երթևեկութիւնը սկսվում է առաւօտեան ժամը 7½-ից և տևում է մինչև կէս օրվայ ժ. 2-ը։ Այնուհետև 3 ժամեայ դադարից յետոյ, ժամը 5-ից նորից սկսվում է երթևեկութիւնը մինչև գիշերվայ ժամը 11-ը։ Երեկ էլեքտրաքարշի վագոնների թիւը աւելացվեց 5—6-ով։

◆ Քաղ. վարչութիւնը որոշել է, հեռու մնալ միջնորդի դեր կատարելու էլեքտրաքարշի վարչութեան և գործադուլաւոր բանւորների միջև։

◆ Այս քանի օրը, էլեքտրաքարշի գործադուլից յետոյ, ոստիկանապետի կարգադրութեամբ քաղաքում կանգ բանեցնելու իրաւունքից զրկված են 22 կառապաններ որոշած սակագնից ճանապարհորդներից աւելի վարձ պահանջելու և կողմի վերաբերմունքի համար։

◆ Թէլաւի գաւառից Թիֆլիս է եկել ակադեմիկ Նիկ. Մարրը։ Այս օրերս նա մեկնում է Սանտէթի շրջանը։

◆ Քաղ. վարչութիւնը մերժել է քաղաքային սանիտարա-բժշկական վերատեսչի միջնորդութիւնը՝ հին սպանդանոցի շէնքում մի ընակարան յատկացնելու ժամանակաւորապէս։

◆ Այս տարվայ սկզբից մինչև ներկայ յուլիսի 1-ը բուսաբանական այգին այցելել են 53,000 հոգի վճարող այցելուներ։

◆ Մօտ օրերս Թիֆլիսում վախճանվեց և ամսիս 10-ին հանդիսաւորապէս թաղվեց պաշտօնաթող գնդապետ Գ. Գ. Ղորղանեան։ Հանգուցեալը 16 տարի եղել է քաղ. դումայի ձայնաւոր։ Թաղմանը ներկայ էր քաղ. վարչութիւնը իր ամբողջ կազմով։ Դագաղին դրվեցին մի քանի պսակներ։ Հանգուցեալը թաղվեց Վէրայի գերեզմանատունը։

◆ Մի խումբ շախմատ խաղացողների նախաձեռնութեամբ մօտ օրերս «Նոր-Ակումբում» կազմակերպվելու է շախմատ խաղացողների տուրնիր։ Նշանակված են դրամական 4 պրիզներ։ Խաղին մասնակցողները, մինչև յուլիսի 15-ը կարող են գրվել յիշեալ ակումբում։ Բացի ակումբի անդամներից խաղին կարող են մասնակցել և կողմնակի մարդիկ։

◆ Թիֆլիսի այգեգործական ընկերութեան բացումը տեղի չունեցաւ նախանցեալ օրը, որովհետև մեքենայի կառուցման աշխատանքները տակաւին վերջացած չեն։

◆ Մեզ խնդրում են բարեգործ անձերի ուշադրութիւնը հրաւիրել Թիֆլիսաբնակ Բոյանճանց ազգանունով վեց անչափահաս որբերի վրա, որոնց ծնողները նորերս վախճանվելով՝ խեղճ երեխաները ենթարկված են ամենադառն աղքատութեան և անտէր ու անտիրական վիճակի։ Յիշեալ որբերին օգնել ցանկացողները կարող են նպաստները յանձնել «Մշակի» գրասենեակին՝ հասցնելու ըստ պատկանելոյն։

◆ «Пет. Вѣд.» թերթի մէջ տպված է Շերվանզադէի յօդուածի թարգմանութիւնը Գիւոթէի «Ֆաուստ» դրուագի մասին, որ տպվեց «Մշակի» անցեալ 1913 թ. № 249-ի

նշանակէ մշտապէս հսկելու կրթական մասի դասաւանդութեան վրա։ Չի զլանում խնդրելու, որ իր այդ փառաւոր կարծիքը հասցնեն թագաւոր Կայսրին։

Հակառակ լուսաւորութեան մինիստրի կարծիքի ընդունվում է մինիստրների ժողովում արևելեան մասնաժողովի ծրագիրը, և 1848 թ. քիչ փոփոխութեամբ հաստատվում է ճեմարանի նոր կանոնադրութիւնը։

Այս կանոնադրութեամբ հիմնովին փոխվում է ճեմարանի և՛ ուղղութիւնը և՛ նպատակը։ Թէև նա դառնում է բարձրագոյն դպրոց և ստանում բոլոր իրաւունքները, որ յատուկ էին պետական բարձրագոյն դպրոցներին, բայց կանոնաւոր, մանկավարժական հիմունքների վրա հաստատված կրթական հիմնարկութիւնից շատ հեռու է մնում։ Կրթական հաստատութիւնից կարծես նա վերածվում է դարբնոցի՝ գործնական մարդիկ տալու։

Աւանդվելիք առարկաների մէջ մեծ տեղ է տրված լեզուներին, յատկապէս արևելեան, նոյնիսկ դասարանական բաժնում։ դրանով ջանք է գործ դրված ոչել դասարանական բաժինը ի վնաս միջնակարգ կրթութեան և զրկել աշակերտութիւնը հավասարաչափ մրցելու հնարաւորութիւնից։ պատրաստել մեծ մասամբ գործնականապէս լեզուագէտ անձեր զանազան պետական պաշտօնների համար՝ թարգմանիչներ, դաստաւորներ և այլ չինովնիկներ, ինչպէս մասնաժողովն էր արտայայտվել։

Այդ նպատակով ճեմարանում հաստատվում են արքունի հաշվով քսան (20) թոշակաւորներ, որոնց կովկասեան իշխանութիւնն է ընտրում տեղային ծառայողների և ատիճանաւորների զաւակներից։ Դրանք կոչվում են կովկասեան թոշակաւորներ. աւարտելուց յետոյ պարտաստվում են մտնել ծառայութեան յիշեալ իշխանութեան որոշմամբ։

Նոր կանոնադրութեամբ հաստատվում և ամրապնդվում է աշակերտութեան առաջին երկու կարգը—հոգևորական և առևտրական։ Թէև նոր կանոններով կրճատվում է միջնակարգ կրթութեան բաժինը, բայց համալսարան մտնելու ձգտումը, որպէս ժամանակի պահանջ, վառ է մնում աշակերտութեան սրտում, հետևապէս շարունակում է իր գոյութիւնը պահպանել աշակերտութեան և այդ կարգը։ Այդպիսով ստեղծվում է չորս կարգի աշակերտութիւն. ա) Կովկասեան

մէջ։ Թարգմանութիւնը կատարել է պ. Մ. Սալահերդեանը։

◆ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ համարի մէջ տպված Հայոց Դր. Խմբակցութեան ժողովի մասին եղած յօդուածում սպրդել է մի այսպիսի սխալ. այն է՝ թէ պատաւոր անդամներ ընտրվեցին հանգուցեալ Կօնստ. Զուբալովի որդիք՝ Եակով և Լևոն Զուբալովներ։ Դրանց պէտք է աւելացնել և Պեստր Զուբալովի անունը։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Շուշուց մեզ հեռագրում են, որ Աբէլեանի դերասանական խումբը սկսել է իր ներկայացումները, որոնք դէպ իրանց են գրաւում բազմաթիւ հասարակութիւն։

◆ «Петерб. Курьеръ»-ի ասելով, Պետական Խորհրդի երկրորդ դեպարտամենտը այս օրերս Բարձրագոյն հաստատութեան է ներկայացնելու հարաւ-կովկասեան երկաթուղային ակցիզներական ընկ. կանոնադրութիւնը։ Ընկերութեան հիմնադիրներն են Ա. Ա. Դաղօմսկի, Ս. Գ. Լիանոզով և իշխ. Ն. Ա. Զելօկայով։ Ընկ. դրամագլուխը, ըստ կանոնադրութեան, որոշված է 72.000,000 ռուբլի։ Ինչպէս յայտնի է, երկաթուղային այս կոնցեսիան կապ ունի Օլթիի շրջանի քարածուխի և պղնձի ընդարձակ հանքերի գործի հետ։ Երկաթուղու գիծը հասնում է ֆրանսիական Փոքր-Ասիայի երկաթուղային կոնցեսիաներին, և բացի արդիւնաբերականից, այդ գիծը ունի նաև ռազմագիտական մեծ նշանակութիւն։

◆ Բաքուի քաղաքագլուխ Լ. Լ. Բիչը ներկայումս գտնվում է Պետերբուրգում, ուր գնացել է քաղաքային գործերով։ Պետերբուրգից նա ամիս ու կէսով մեկնելու է արտասահման։

◆ Զաքաթալայից գրում են, որ աւարդակախմբին, որ կազմված էր չորս հոգուց, հետապնդելու ժամանակ բոլորին էլ սպանել են Դաղստանի սահմանում, Ղուրմուխի գիւղական շրջանում։

◆ Բութայիսից գրում են, որ վրաց «Լրի» թերթի խմբագիր Գ. Բրեգաձէն շրջանային դատարանի վճռով դատապարտվել է երեքշաբթեայ բանտարգելութեան։ Թերթը փակված է։

◆ Կովկասի հանքային վարչութիւնը Ս. Բալեանին, Ս. Խօջայանին, Վ. Թայրեանին և Մ. Սիմէօնեանին թոյլատրել է պղնձի և այլ հանքերի հետազօտութիւն կատարել Գանձակի գաւառի Բարում գիւղում։

◆ Պետերբուրգում յուլիսի 10-ին, տպարանների ծառայողների գործադուլի պատճառով, լոյս չը տեսան «Рѣчь», «Совр. Сл.», «День», «Петерб. Курьеръ» և «Бирж. Вѣд.», թերթերը։

◆ Պետերբուրգի գործարանատէրերը որոշել են անմիջապէս հաշիւ տալ գործադուլաւոր բանւորներին և հեռացնել։

◆ Պետերբուրգի մօտ եղած երկաթուղային բոլոր գծերի վրա նախազգուշական միջոցներ են ձեռք առնված գնացքների երթևեկութիւնը գործադուլաւորների կողմից չընդհատելու դէմ։ Վարշաւեան, Բալտիկեան և Նիկոլայևեան կայարանները պահապան զօրավաշտեր են ուղարկված։

◆ Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութիւնը մի գրութիւն է ներկայացրել մինիստրների խորհրդին, գործադուլը կարգաւորելու մասին։ Գրութեան մէջ քննվում է գործը հաշտութեամբ վերջացնելու և չը քանած օրերի վարձը տալու հարցերը։

◆ «Нов. Вр.» յայտնում է, որ յուլիսի 10-ին կայանալու է մինիստրների խորհրդի նիստը գործադուլից առաջացած դրութիւնը քննելու։

◆ «Гражданинъ» թերթի հրատարակիչ իշխ. Մեշչերսկիի առողջական դրութիւնը վատթարացել է։

◆ «Колоколъ»-ը յայտնում է, որ լուրերի համաձայն ոստիկանական իշխանութեան ձեռքին կան ընդարձակ նիւթեր, որոնցով Պետական Դումայի էս-դեկ անդամները մեղադրվում են քաղաքական գործակցութիւններ կազմակերպելու և պաշտպանելու մէջ, մանաւորապէս Բաքուի գործադուլի մէջ։

◆ Մոսկվայում գործադուլ են արել գործարանական և տպարանական մօտ 20,000 բանւոր։ Ցոյցեր անելու փորձեր են արել։

◆ Ռիգայում գործադուլ են արել 28,000 բանւոր, որպէս բոլոք և համակրութիւն Բաքուի և Պետերբուրգի բանւորներին։

◆ Գործադուլը Խարկովի մեծ գործարաններում շարունակվում է։ Կատարվում են ձերբակալութիւններ։

◆ Մոսկվայից գրում են, որ գործադուլը անցել է գործարանները։ Էլեքտրաքարշը չէ գործում։

◆ Օդեսայում սկսել են գործադուլներ։ Ձերբակալութիւններ են լինում։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերին-Ադդան, 5 յուլիսի

Գիւղիս դպրոցական բաղանիքի շինութեան յանձնաժողովս ստացաւ բաղուաբնակ երիտասարդութիւնից և համակրողներից Ա. Ցարութիւնեանի միջոցով 220 ր. յօգուտ բաղանիքի շինութեան գործիս։ Յանձնաժողովն իր սրտագին և անկեղծ շնորհակալութիւնն է յայտնում բոլոր նուիրատուներին։

Բաղանիքի շինութեան հիմքը դրվեց մայիսի 20-ին, յանձնաժողովիս և հասարակութեան ներկայութեամբ. այժմ շինութեան պատերի գործը աւարտված է. մնում է տիրսը պատրաստելը, որը հաւանօրէն պատրաստ կը լինի մօտ ժամանակներս։

Մինչ այժմս յանձնաժողովս ստացել է յօգուտ բաղանիքի շինութեան 350 ր. նուէրներ, բացի հասարակութեան յատկացրած գումարը։

Բաղանիքի շինութեան յանձն. կողմից
Նախագահ յանձն. Արշակ Մելիքսեդեկեանց

թոշակաւորներ՝ պատրաստվող չինովնիկութեան. բ) եկեղեցական թոշակաւորներ՝ հոգևոր կոչման. գ) առևտրականներ և դ) համալսարան մտնողներ։

Յիշեալ կանոնադրութեամբ հաստատվում է ճեմարանում մի նոր պաշտօն՝ հոգաբարձուի օգնական։

Դրանով տեսչի պաշտօնն ազատվում է լաղարեաններից։ Խաչատուր Լազարեանը, որ ճեմարանի հիմնադրութեան օրից մինչ այդ տեսուչ էր, այժմ նշանակվում է հոգաբարձուի օգնական։

Հայկական առարկաների և առհասարակ հայկական բաժնի հսկողութիւնը վերապահվում է տեսչի օգնականին կամ վերատեսչին։

Այդ շրջանում աւանդվում են հետևեալ առարկաները.

ա) Կրօնագիտութիւն։

բ) Արևելեան լեզուներ. 1) հայերէն, 2) արաբերէն, 3) պարսկերէն, 4) օսմաներէն, 5) վրացերէն, 6) թաթարերէն։

գ) Դասարանական բաժնում. 1) ռուսաց գրականութիւն, 2) մատեմատիկա և բնագիտութիւն, 3) աշարհագրութիւն և վիճակագրութիւն, 4) ընդհանուր և ռուսաց պատմութիւն, 5) ռուսաց օրէնք, լեզուներ, 6) լատիներէն, գերմաներէն, 7) ֆրանսերէն։

դ) Արուեստներ. 1) վայելչագրութիւն, 2) նկարչութիւն և գծագրութիւն, 3) կաքաւում։

Այս ամենից պարզ է, որ 1848 թ. կանոնադրութիւնը և առհասարակ ճեմարանի կրթական մասի վերանորոգութիւնը ոչ միայն չը պարզեցին նրա նախկին քաոսդրութիւնը, այլ առաւել ևս բարդեցին. այդ կողմից յիշեալ նոր կարգերը անմիջապէս շարունակութիւն են անցեալի։ Միւս կողմից երկրորդական տեղ տալով միջնակարգ կրթութեանը՝ զրկում են ճեմարանն իր տրադիցիայից, խզում նրա կապը համալսարանի հետ և տանում ընդդէմ մանկավարժական սկզբունքների։

Կողմնակի կերպով կարող ենք յիշել, որ կանոնադրութիւնից դեռ մի քանի տարի առաջ ճեմարանից հեռանում է ուսուցչապետ Դաւիդովը և նրան փոխարինող չէ լինում. սա համալսարանի ազդեցութեան թուլանալու մի շօշափելի նշան էր։ Թէ որքան հակամանկավարժական են նոր կարգերը, երևում է հենց առաջին հայացքից, եթէ նայենք նոր ծրագրին։ Ութ տարվայ ընթացքում ծրագրվում է անցնել

տասը լեզու. մի բան, որ նոյնիսկ ամենայարմար պայմաններում չէ կարող իրագործվել։

Յետագայ 50-ական թուականներին ճեմարանի կեանքը աշխոյժ է ստանում և կարծես առաջադիմում։ Սակայն այդ՝ նոր կանոնադրութեան չը պէտք է վերագրել։ Այդ շարժումը ժամանակաւոր էր և արտաքին պատճառներից առաջացած. այդ թուականներին պետական դպրոցներում տիրող անբաւականութիւնների պատճառով դրանցից շատերը փակվում են. աշակերտութիւնը դիմում է Լազարեան ճեմարանը. ահա թէ ինչն էր պատճառը, որ ճեմարանում աշակերտների թիւը աճում է, բայց կարճ ժամանակից յետոյ նորից քչանում։

1851 թ. Լազարեան ճեմարանում բացվում է նոր բաժանմունք՝ նախակրթարան։ Դա ևս չը նախատեսված մի երևոյթ էր, որ ինքն ըստ ինքեան թէև ուրախալի, բայց տխուր պատճառից առաջացած. մի տարի առաջ՝ 1850 թ. վախճանվում է Լազարեան ընտանիքի վերջին ժառանգը՝ Խաչատուր Լազարեանի որդի՝ Մանուկ Յովհաննէսը։ Ի յիշատակ այդ վաղամեռ որդու՝ նրա ծնողները և հօրեղբայր Յովհաննէս Լազարեանը նուիրելով ճեմարանին 60,000 ր.՝ հիմնում են նախակրթարանը, որ շատ նպատակայարմար է ճեմարանին, յատկապէս հայ մանուկների համար։ Դրանով հնարաւորութիւն է տրվում Լազարեան կոչված սաներին հեշտութեամբ ընդունել ճեմարան՝ առանց կամ քիչ պատրաստութեամբ։ Յիրաւի դրանց թիւը այդ ժամանակից աճում է և 60-ական թուականներին արդէն հասել էր քառասունչորսի (44-ի)։

Այնուհետև ճեմարանի կեանքը առանց փոփոխութեան շարունակվում է մինչև հոգաբարձու Յովհաննէս Լազարեանի մահը՝ 1858 թ.։ Ինչպէս վերջինիս, նոյնպէս Մանուկ Յովհաննէսի մահը վճռական նշանակութիւն են ունենում ճեմարանի ապագայ ընթացքի համար։ այս մասին կը խօսենք յետոյ։

Դ. Դերենիկեան

Պետերբուրգ

(Վերջը միւս անգամ)

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պետերբուրգում յուլիսի 10-ին, տպարանների ծառայողների գործադուլի պատճառով, լոյս չը տեսան «Рѣчь», «Совр. Сл.», «День», «Петерб. Курьеръ» և «Бирж. Вѣд.», թերթերը։

◆ Պետերբուրգի գործարանատէրերը որոշել են անմիջապէս հաշիւ տալ գործադուլաւոր բանւորներին և հեռացնել։

◆ Պետերբուրգի մօտ եղած երկաթուղային բոլոր գծերի վրա նախազգուշական միջոցներ են ձեռք առնված գնացքների երթևեկութիւնը գործադուլաւորների կողմից չընդհատելու դէմ։ Վարշաւեան, Բալտիկեան և Նիկոլայևեան կայարանները պահապան զօրավաշտեր են ուղարկված։

◆ Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութիւնը մի գրութիւն է ներկայացրել մինիստրների խորհրդին, գործադուլը կարգաւորելու մասին։ Գրութեան մէջ քննվում է գործը հաշտութեամբ վերջացնելու և չը քանած օրերի վարձը տալու հարցերը։

◆ «Нов. Вр.» յայտնում է, որ յուլիսի 10-ին կայանալու է մինիստրների խորհրդի նիստը գործադուլից առաջացած դրութիւնը քննելու։

◆ «Гражданинъ» թերթի հրատարակիչ իշխ. Մեշչերսկիի առողջական դրութիւնը վատթարացել է։

◆ «Колоколъ»-ը յայտնում է, որ լուրերի համաձայն ոստիկանական իշխանութեան ձեռքին կան ընդարձակ նիւթեր, որոնցով Պետական Դումայի էս-դեկ անդամները մեղադրվում են քաղաքական գործակցութիւններ կազմակերպելու և պաշտպանելու մէջ, մանաւորապէս Բաքուի գործադուլի մէջ։

◆ Մոսկվայում գործադուլ են արել գործարանական և տպարանական մօտ 20,000 բանւոր։ Ցոյցեր անելու փորձեր են արել։

◆ Ռիգայում գործադուլ են արել 28,000 բանւոր, որպէս բոլոք և համակրութիւն Բաքուի և Պետերբուրգի բանւորներին։

◆ Գործադուլը Խարկովի մեծ գործարաններում շարունակվում է։ Կատարվում են ձերբակալութիւններ։

◆ Մոսկվայից գրում են, որ գործադուլը անցել է գործարանները։ Էլեքտրաքարշը չէ գործում։

◆ Օդեսայում սկսել են գործադուլներ։ Ձերբակալութիւններ են լինում։

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Հանգուցեալ Եփրեմ խանը ամուսնացած էր մի տիկնոջ հետ, որը նրա մահից յետոյ տիրացաւ նրա հարիւր հազարների հանող կաբոզութեան։

Քանի Եփրեմը մի պարզ ծառայող էր ճարտարապետ Թ. Թորոսեանի մօտ և հրամայում էր նրա աղիւսագործարանին, կինն էլ յայտնի էր՝ որպէս մի սալմաստեցի պարզուկ կին, որ զբաղվում էր իր տնտեսութեամբ, բանջարաբուծութեամբ։ Սկսվեց պարսկական յեղափոխութիւնը, բաղդի աւնիւը Եփրեմին թռցրեց մինչև մինիստրական ամենաբարձր աթոռը, և ամբողջ Իրանի հայերացն ուղղված էր դէպի նաւ Անուրանալի է, որ այդ բանին քիչ չը նպաստեցին Եփրեմի բնական որոշ ընդունակութիւնները՝ քաջութիւն, անվեհերութիւն, հեռատեսութիւն, խորամանկութիւն... Քիչ դեր չը խաղաց նրա բարձրացման մէջ նաև Դաշնակցութիւնը։ Եփրեմի հետ բարձրացաւ նաև նրա կնոջ դիրքն ու անունը. որոշ գոյնի մարդիկ Եփրեմին կնքեցին «Հայրիկ» մակդիրով, ինչպէս և նրա կնոջը, որ իր գիւղական անուան տեղ կոչում էր Իրան Անահիտ, նորից վերափոխեցին «Մայրիկի»։ Սալմաստեցի մի տգէտ գեղջկուհի մոգական գաւազանի մի հարուածով յանկարծ այնպէս վերափոխվեց, որ, ըստ թայֆայական թերթերի, սկսեց Թէհրանում պարսկուհիների միտինգներ գումարել և իբրև լուրջ և ընդունակ մի հռետորուհի՝ պարլամէնտարիզմից ճառել, յեղափոխութեան դերն ու նշանակութիւնը բացատրել և Ֆէրդինանդ Լասալին քննադատելով՝ պարսկուհի-խանումներին դարձնել գիտակից-սահմանադրականներ։ Սուրում էին արաբական նժոյգները, թռցնում Թէհրանի խիավաններով (փողոցներ) լանջ կառքը, որի մէջ բազմած էր ընդհանուրի յարգանքներին արժանացող «Մայրիկը», որի ետևից գալիս էր շիկ հագնված ասպազէն պահակախումբը։ Սալմաստի պառաւ տատիկների հեքիաթները կեանքի մէջ իրականացել էին։

Աշխարհային երջանկութիւնը վաղանցուկ է... Ցաւալի մահով վախճանվեց հանգուցեալ Եփրեմը, իրերի դրութիւնը կամաց-կամաց սկսեց փոխվել և «Մայրիկի» հմայքն էլ կամաց-կամաց սկսեց նուազել։ Դեռ «Մայրիկը» վերափոխվեց նորից Անահիտի, Անահիտն էլ վերափոխվում է իր գիւղական անուան, ապա գալիս են մերկացնող նորանոր անպատւաբեր փաստեր... Հարցը նրանումն է, որ «մայրիկութեան», հռետորութեան, պարլամենտարիզմի գիտակցութեան նրան բարձրացնողներն են, որ այսօր նոյնքան անխնայաբար վայր գարկել են ձգտում։ Այդ հարցի յետաշրջական զարգացումն հետևեալ կերպով եղաւ։

Հայ երիտասարդներ, որոնք մտել էին Եփրեմի բանակը որպէս կամաւոր յեղափոխականներ, պարսկական կառավարութիւնից ստանում էին որոշ ոռճիկ և ապրուստի միջոցներ։ Կամենալով իրանց արեան գնով ձեռք բերած դրամները խնայել և ապագայում իրանց կամ իրանց ծնողներին և ազգականներին մի գումար թողնել, խնդրել էին Եփրեմին, որ իր մօտ պահէ իրանց խնայած ամսականները։ Այդպիսով Եփրեմի մօտ էր գտնվում յեղափոխական հայ զինուորների խնայողական կասսան՝ իր հաշուեցուցակներով։ Եփրեմի մահից յետոյ, երբ անցնում է ընդհանուր սուզը և «Մայրիկը» կարողանում է ձեռք ձգել նրա բոլոր կարողութիւնն ու ստացուածքը, երիտասարդ զինուորները դիմում են նրան և խնդրում՝ տալ խնայողական գանձարանի իրանց հաշանելիքները։ «Մայրիկը» բացարձակ կերպով հրաժարվում է նրանց պահանջներից, յայտարարելով որ ինքը ոչ մի տեղեկութիւն չունի խնայողական գանձարանի գոյութեան մասին և ոչ էլ հաշուեմատեան է գտել Եփրեմի թղթերի մէջ։ Աղմուկը ծայր է տալիս և սկսում են խռովութիւններ և բարդութիւններ առաջ գալ։ Ետեւի «Մայրիկը» կռահելով ապագայ անախորժութիւնները սուսիկ-փսուսիկ մի օր նստում է աւտոմոբիլը և... պուկ դէպի Եւրոպա։ Կանքի և արեան գարանտիայով անտեսած խեղճ զինուորների մի քանի հազարներն էլ կցվում են հարիւր հազարներին և «Մայրիկին» թե տալիս ու թռցնում դէպի վայելքների աշխարհը... Այդ միայն չէ։ լուր է տարածված, որ Եփրեմի հարազատ քոյրը եկել է Թէհրան պաշտօնական զօկումէնտներով և, իբրև գանձակեցի ու ռուսահպատակ, դիմել է ռուսաց կայսերական դեսպանատան, խնդրելով իբրև Եփրեմի ժառանգներ՝ պաշտպանել իրանց իրաւունքները, հետևեալ յայտնութիւններն անելով. Եփրեմը ամուսնացած չէր, այլ ապօրէնի կենակցում էր այդ կնոջ հետ, որի ամուսինը տակաւին կենդանի է։ Կան ասողներ, որ «Մայրիկը» նոյն իսկ ասորի է և մի ասորու կին։ Թէ ինչպէս Եփրեմի իսկական ժառանգ հարազատները պիտի կարողանան ստանալ «Մայրիկից» Եփրեմի թողած անբաւ հարստութիւնը, տակաւին հարց է, մանաւանդ որ նա գտնվում է Եւրոպայում, ուր փոխադրել է նաև իր հարստութիւնը։ Այս ամենից հետաքրքրականն այն է, թէ թայֆայական թերթերի «բարեխիղճ» թղթակիցները, որ երբեմն Եփրեմի և «Մայրիկի» ամեն մի շարժումը տեղեկագրում էին, ինչու այժմ զաքրէական լռութիւն են պահպանում...

Թէհրանի գրաւումից յետոյ, կամենալով իր ֆինանսական ընդունակութիւններն ևս ցոյց տալ, Եփրեմ-խանն առաջարկում է մինիստրական խորհրդին՝ հայերին ևս մասնակից անել պետական հարկատուութեան, և ահա մի շարք անուղղակի հարկեր են մտցվում՝ աղի, աֆիոնի, ոգելից ըմպելիների և այլն։ Պարսից ժողովուրդը ամեն տեղ գլուխ է բարձրացնում և աջողում է աղի հարկը վերացնել։ Հայերն էլ գլուխ են բարձրացնում և բողոքում ոգելից ըմպելիների բանդերոլի դէմ, որպէս անուղղակի հարկ, նոյն իսկ պահանջում՝ եթէ հայրենիքը կարիքներ ունի՝ իրանք պատրաստ են ուղղակի հարկեր վճարելու։ Թայֆայական բանակը դուրս է գալիս իր մաուզերներով և բռնի կերպով լռեցնում բողոքող ժողովրդի ձայնը, պատճառաբանելով՝ 1) յեղափոխական կառավարութիւնը կարիքներ ունի, հայերն ևս պարտաւոր են աջակցել, 2) այդ հարկերը միայն ժամանակաւոր են, 3) յեղափոխական հայ զինուորների համար պաշտօններ են բացվում ակցիզային վարչութեան մէջ և այլն։ Այդպիսով լռեցրին բռնութեամբ ժողովրդի ձայնը և անուղղակի հարկերն արմատականացին Պարսկաստանում, ծանրանալով մխիթարեան հայերի վրա։

Անցաւ հազիւ մի քանի տարի, և ակցիզային պաշտօնները, որ սկիզբներում բացառապէս «աղերքի» ձեռքն էր, անցաւ պարսիկներին, և այսօր, բացի մի քանի ստորին պաշտօնեաներից, բոլոր պաշտօնները գրաւել են պարսիկները և հետզհետէ աւելացնում հարկերը, ճնշում հայերին, տեղիանտեղի հսկողութեան անունով մուտք գործում հայ տները, խախտում տան անձեռնմխելիութիւնը։ Եւ նրանք, որոնք երէկ աջակցում էին «մեր աղերքին» բռնի ոյժով լռեցնելու բողոքների ձայնը, այսօր իրանք նզովում այդ անուղղակի հարկերը հայ ժողովրդի վրայ փաթաթողներին։ Բայց արդէն ուշ է։

Ակցիզային վարչութիւն, պաշտօնեաներ, ֆորմաներ, ձեկանութիւններ սահմանվելուց յետոյ, ոգելից ըմպելիների առևտուրը սկսեց աւելի աչքի ընկնել, աւելի շօշափելի ձև ստանալ։ Պարսիկ հոգևորականութիւնն ու մոլեռանդ դասը, որի աւելութիւնը դէպի եւրոպական պետութիւնները միշտ էլ արտայայտվել է հայի գլխին թափելով իրանց դառնութեան մաղձը, այժմ սկսել են բացարձակ կերպով, նոյնիսկ մամուլի մէջ հայերին անուանարկել, քարոզելով անուանել, իբր ոգելից ըմպելիներ տարածողներ և անբարոյականութիւն սերմանողներ։ Գրգռումն հայերի դէմ ընդհանուր կերպարանք է ստանում։ Մի առժամանակ Թէհրանի գինետները փակելուց յետոյ, այժմ հրամայված է խանութների դարակները վարագոյրով ծածկել։ Բայց և այնպէս, հայերի դէմ խմորումը շարունակվում է։ Ինչպէս շատ չարիքներ հայ կեանքում, այնպէս էլ այս չարիքի արմատը՝ «մեր աղերքն» են։ Ընթերցողը թող չը զարմանայ, եթէ սրան կցենք, որ երէկվայ «սրբազան զաղափարի մարտիկը» իրանց համաբողներից ոմանք այսօր անառականոց են պահում... Եթէ հնար լինէր մի անթափանցիկ վարագոյրով էլ ծածկել մեր վերջին տարիների «գաղափարական» կոչված կեանքի այլանդակութիւնները... Ի՜նչպէս կարմրում և ամօթահար են լինում շատ ազնիւ և անկեղծ գործիչներ, երբ այսօր տեսնում են իրանց երէկվայ զինակից ընկերների անփառունակ գործունէութիւնները...

Մարզ

Ղազվին

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ դեսպանատներում եղած տեղեկութիւնների համաձայն, տիեզերական պատերազմը աղերսում է՝ յանուն ուղղափառների փրկութեան Մօտաւոր Արևելքում, Թրակիայի և Փոքր-Ասիայի յոյներով բնակեցված շրջաններում բարեկարգութիւններ մտցնել, հայկական վիլայէթների օրինակով։

◆ Այն յամառ լուրերի առիթով, թէ Աւստրիան առաջիկայում ուլտիմատում է ներկայացնելու Սերբիային, ռուսական պաշտօնական շրջաններում տեղեկութիւններ կան, թէ Սերբիան պատրաստ է ընդառաջել Աւստրիային նրա բոլոր ցանկութիւններում, ինչ վերաբերում է Ֆրանց-Ֆերդինանդի սպանութեան հարցին։ Սերբիայի խաղաղ տրամադրութիւնից կարելի է յուսալ, որ միջադէպը կը հարթվի։ Սերբիը չեն հաւատում ուլտիմատումի, որին ոչ մի առիթ չէ եղել։

◆ Բերլինի բոլոր լրագիրները լի են սպառնալիքներով Ռուսաստանի, Ֆրանսիայի և Սերբիայի հասցէին։ Լրագիրները միաձայն յայտարարում են, որ եթէ Պետերբուրգը փորձի պաշտպանել Սերբիային, Գերմանիան կը խառնվի գործի մէջ։ Բօրսայի արժէթղթերը ընկնում են։

◆ Հռոմից հեռագրում են, որ իտալական էսկադրան հերցոգ Աբրոցի ղեկավարութեամբ դիմեց դէպի ալբանական ջրերը, լուրերի համաձայն, ցոյցի համար։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի երիտասարդ, որը տիրապետում է ԱՆԳԼԻԵՐԷՆ, ՊԱՐՍԿԵՐԷՆ, ԹՈՒՐՔԵՐԷՆ, մասնաւոր ոռաներէն եւ ֆրանսերէն լեզուներէն, ցանկանում է **ՈՒՆԵՆԱԼ ՊԱՏՑՕՆ** որևէ հաստատութեան մէջ։ Հասցէն՝ Троицкая ул. № 14. 2—1

Բ. Հ. Կուլտ. Միութեան հրատարակութիւնները և պահեստում ունեցած գրքերը։

—o—

	Ր.	Կ.
1. «Բանաստեղծութիւններ», Ե. Չովհաննիսեանի	1	50
2. «Վէրք Հայաստանի», Խ. Աբովեանի (սպառած)		50
3. «Բուսական աշխարհ», Կ. Մելիք-Շահնազարեանի (սպառված)		5
4. «Դիւան հայոց պատմութեան», Գիւտ ա.-ք. Աղանեանի		4
5. «Գրանդ Նաւապետի որդիքը», Ժիւլ-Վերնի, փառակազմ	2	75
6. » առանց կազմի	1	50
7. «Անգլուխ Ձիաւորը», Մայն-Ռիդի, փառակազմ	1	75
8. » առանց կազմի	1	
9. «Շերլօկ Հոլմսի արկածները», Կոնան-Դոյլի		50
10. «Աֆրիկեան կաշուէ գուլպայ», Կ. Ֆայլկէնհօրստի		50
11. «Хрестоматія», Ս. Մանդինեանի		75
12. «Ձեռնարկ հայոց պատմութեան», Տ. Տէր-Գրիգորեանի		70
13. «Կօշկակար կատու», հայերէն		50
14. » թուրքերէն		50
15. » վրացերէն		50
16. «Անանապահութիւն», 1 մաս Կ. Մելիք-Շահնազարեանի		30
17. » II և III մաս		50
18. «Գործնական շերամապահութիւն», Կ. Մ.-Շահնազարեանի		5
19. «Մ. Նալբանդեանի մտնեսական թէօրիան», Ե. Պալեանի		25
20. «Ինչ տիպի տորին և միջնակարգ դպրոցների կարիք ունի Անդրկովկասը», Կ. Խաչատեանի		15
21. «Վիլհելմ Տէլլ», Վ. Օստրոգորսկիի		5
22. «Ցրնկն», »		5
23 «Մանր վարկի հաստատութիւնները»,		5
24. «Համբակի մշակութիւնը», Ն. Տարանտիսովի		3
Դրուագներ հայոց պատմութենից		
25. «Արտաշէս Երկրորդ», Վ. Փափազեանի		15
26. «Գագիկ Երկրորդ», »		15
27. «Վարդանանց պատերազմը», »		30
28. «Սահակ և Մեսրոպ», »		15
29. «Թորոս իշխան», »		15
30. «Լևոն Երկրորդ» »		15
31. «Վահան Մամիկոնեան», Մ. Առաքելեանի		15
32. «Տրդատ և Գրիգոր Լուսաւորիչ», »		15
33. «Մամիկոնեան իշխաններ Մուշեղ և Մանուէլ», Մ. ք. Ղազարեանի		30
34. «Հայկազանց թագաւորներ», Ի. Տէր-Ղազարեանի		15

—o—

35. «Голодъ», Ս. Զաւարեանի		30
36. «Կանոնագիր շտեմարան-գանձարանի», Նոյնի		2
37. «Վարկատու ընկերութեան կանոնագրութիւն», փոխադրութիւն		30
38. «Հացահատիկների մարգային կուլտուրան», Ն. Ղարագեօզեանի		5
39. «Ի՞նչ բան է զէմսվօն», Ի. Բելօկոնսկիի		5
40. «Ինձ մի՛ խնդրիր», բօմանս, խօսք Ց. Թումանեանի, ներդաշնակութիւն Ա. Մայիլեանի		40
41. «Կովկասի քարտէզ», (20 վերստանոց, հայ ազգաբնակութեան խտութիւնը Կովկասում),		3
42. «Օգի Հայաստանի», գունատիպ նկար		50
43. «Արտաշէսի յուղարկաւորութիւնը», գունատիպ նկար (սակաւաթ.)		50

—o—

44. «Շեւդական մարմնամարզութեան ընտիր վարժութիւններ», նկար (հրատ. բժ. Ա. Բուդուղեանի)		20
45. «Ազգի գոյութեան մեծ խնդիրը», բժ. Բ. Աղասարեանի		10
46. «Ինչպէս հիմնել գիւղատնտեսական ընկերութիւն», Ա. Ե. Կուլիժնիյ, (հրատ. բժ Ա. Բուդուղեանի)		10
47. «Բանւորի ապահովութիւնը» բժ. Ն. Վիդօրչեկի, (հրատ. բժ. Ա. Բուդուղեանի)		10
48. «Սով», բժ. Ա. Բուդուղեանի		10
49. «Ընտրութիւն կանանց», Գ. Մեծատուրեանի, (հրատ. Ա. Արամեանցի)		15
50. «Հաւատման», Ե. Թ.-ի, հրատ. Ց. Արամեանցի		15
51. «Զրադաշտ», Մ. Թամամշեանցի, հրատ. Ց. Արամեանցի		7
52. «Ռուդոլֆ Վիրխով», բժ. Ա. Բուդուղեանի, հրատ. Ց. Արամեանցի		25
53 «Բեօրսօն», Ե. Թոփչեանի, հրատ. Ց. Արամեանցի		10
54. «Մեծն Ներսէս», » հրատ. Ց. Արամեանցի		10
55. «Հպարտ հոգու երգերից», Հ. Համբարձումեանի, հրատ. Ց. Արամեանցի		30
56. «Արդար Ծերունին», հրատ. տ. Զաբելի		10
57. «Սայեաթ-Նովա»,		15

Հասցէ՝ Баку, Армянскій Культурный Союзъ.
(2) 700. 2—

ԳՈՎԿԱՍԵԱՆ ✦ ԳԻՆԻ ✦

— ԼԵՌՆԱՅԻՆ ԳԵՂԱՑԱՆ ԱՆՏԱՌԱՆԱԼԻ —

Սխալուածի համար ուշադիր եւ բարձր յարգանքներ գինեգործարանի հեռաբերվող հեռաբերիչներ առաջարկում եմ

КОРДІАЛЪ
1910
КАВКАЗСКОЕ ВИНО
Тифлисъ

Սեղանի 1913 թ.
Դեղկա. 1912 թ.
Էկսարա 1911 թ.
Կօրդիալ 1910 թ.

680. 100—6

Թիֆլիս, Լօրիս-Մելիքօվսկայա, № 22.
Տելեֆօն № 17—48.

Մելիտոպոլի հայոց եկեղեցու համար հարկաւոր է մի ձայնաւոր և ձայնագրագէտ

ՍՊԱՍԱՒՈՐ

(ցանկալի է ամուրին), որ հմուտ լինի եկեղեցական բոլոր արարողութիւններին։ Նա պէտք է եկամտանի կազմած պատարագի արարողութիւնով պատրաստ առ այժմ միաձայն և երկձայն խումբ եկեղեցում երգելու համար. պահանջված դէպքում՝ նաև քառաձայն։ Ամսական 40—50 բուբ. ռոճիկ, ձրի սենեակ և աննշան ծխական արդիւնք։ Եթէ նա առաջարկված պայմաններին համապատասխան չը լինի, քահանան արձակում է նրան և վերադարձի ճանապարհածախսը վճարում է եկեղեցին։

Դիմել՝ Мелитополь (Таврич. губ.), Армянскому священнику Мамиконянцъ.
699. 3—2

„Մշակի“ խմբագրատանը վաճառվում են

հետեւեալ վիպական երկերը.

1) ՋՀՈՒԴ ԲՈՒՇԱՆ՝ վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի . 1 ր. —
2) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՒԸ, մեծ վէպ Վ. Հիւգոյի, թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . . 1 ր. 50 կ.
3) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտ. վէպ. Կ. Ֆլամարիոնի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . . 1 ր. 50 կ.
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդոյի, թարգ. Հ. Առաքելեանի — 60 կ.
5) ՏԱՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . . — 50 կ.
6) ՀԱՅՐԵՆԱՀՈՒՐԿ, Ե. Սպլրիի, թարգ. Իս. Յարութիւնեանի . — 50 կ.
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Դի դը Մօպասանի, թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ՍԱՒԱՌՆՈՂ ՈՃԻՆ վէպ. Ց. Սօլովեանի . . . . . — 40 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով, պահանջողներին կը լինի միմիայն 15%։

Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
(5) 10—10

ՄԵՂՐԻԻ ծխական դպրոցի համար **ՀԱՐԿԱՒՈՐ է**

ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ

18 դասով և ռուսաց լեզուի

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ,

որը աւանդելու է նաև կար ու ձև։ Ցանկալի է, որ լինեն ամուսիններ կամ քոյր և եղբայր։

Պայմանների մասին դիմել «Մշակի» խմբագրատուն՝ Լևոն Դանիէլեանին կամ Գ. Մելոյեանին։ 621. 2—1

ՄԵԾ-ՍԱՂԱ գիւղի երկսեռ գրպրոցների համար հարկաւոր է մի փորձված ձայնաւոր—երգեցողութեան

ՈՒՍՈՒՑԻՉ-ԽՄԲԱՊԵՏ,

որ պիտի ունենայ շաբաթական երգեցողութեան 16 դաս և պիտի պատրաստէ եկեղեցական խումբը (առաջին տարին միաձայն, իսկ հետեւեալ տարիները հնարաւոր եղած դէպքում երկձայն կամ քառաձայն)։ Տարեկան ռոճիկ 500 բուբլի։ Ցանկացողները կարող են դիմել հետեւեալ հասցէով. Нахичевань н./Дону. Сел. Большіе-Салы, Попечительству церковно-приход. училищъ. 703. 3—1

Թաւրիզի թեմական դպրոցի համար հարկաւոր է մի փորձված, բարձրագոյն կամ միջնակարգ կրթութեամբ,

ՈՒՍՈՒՑԻՉ,

որը պէտք է աւանդէ մատեմատիկական առարկաներ Գ—Զ դասարանների մէջ 15 ժամ, և ռուսաց լեզու Ե և Զ դասարաններում 8 ժամ։ Դասագինն է 55 բուբլի։ Ցանկացողները պէտք է դիմեն Թաւրիզ, դպրոցի տնօրէն Կ. Պիսնեանին մինչև օ. 694. գոստոսի 10-ը։ 5—2

Սիմֆերօպոլի հայոց ծխ.-երկսեռ դպրոցի համար հրաւիրվում են

ՈՒՍՈՒՑԻՉ

հայոց լեզուի և կրօնագիտութեան շաբաթական 22 դասով, տարեկան 600 բուբլի ռոճիկով։

ՈՒՍՈՒՑԻՉ

Թւաբանութեան շաբաթական 20 դասով (Ա. բաժանմունքում դասաւանդելու է հայերէն, իսկ մնացեալ բաժանմունքներում ռուսերէն) 600 բուբլի ռոճիկով։

Ցանկալի է, որ լինի գիմնազիաւարտ կամ Նոր-Նախիջևանի թեմականաւարտ։ Զէ տրվելու՝ ոչ ընակարան, ոչ վառելիք, ոչ լուսաւորութիւն, ոչ ծառայ և ոչ էլ ճանապարհածախք։ Մնդիրներն ուղարկել մինչև յուլիս ամսի 20-ը։

Դիմել այս հասցէով՝ Попечителю Армяно-Григоріанской Церковно-Приходской школы Доктору А. М. Михаильянцу. Конторная, 11.
(օ. մ.) 684. 3—3

Մամուլի տակն է
Քամալեանց Ս. դպրի
կազմած

„ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔ“

դասագիրքը, Ե. տարի. թոյլատրած Վեհափառի դիւանից։ Մինչև օրս նրա յօրինած կրօնի միւս գրքերը՝ Ա. տարի 10 կ., Բ. տարի 20 կ., Գ. տարի 30 կ. Դ. տարի («Մարգարէներ») 40 կ., վաճառվում են Թիֆլիսի գրախանութներում 20% զեղչով։
(չ. շ.) 675. 5—2

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հրատարակութիւն № 1

Գրքերի գիտի 1500-ամեակի եւ տպագրութեան 400 ամեակի առիթով լոյս տեսաւ

ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ

„Նուիական ազդեցութիւնը հայ երաժշտութեան տեսակետի վրա“ ուսումնասիրութիւնը։

✦ Գինն է 75 կոպ.։ ✦ Վաճառվում է բոլոր հայ գրախանութներում։
(օ. մ.) 658. 6—6

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԹԻՖԼԻՍՈՒՄ ՄԻԱԿ ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ ԼՈՅՍ ՏԵՍՆՈՂ

ԲԺՇԿԱԿԱՆ-ՀԱՅ ՐԱՄԱՏՋԵԼԻ ԱՄՍԱԳԻՐ

„ЖУРНАЛ-ЛЕЧЕБНИКЪ“-Ի

1914 թ-ի երկրորդ կիսամեակի բաժանորդագրութիւնը (յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը)

Ամսագրի նպատակն է՝ առողջութեան պահպանումն և հիւանդութիւնների նախազգուշացումն.

Ամսագրի մէջ յայտնի բժիշկների աջակցութեամբ, պարզ և ամենքին հասկանալի լեզուով բացատրվում է այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է առողջութեան և կեանքի երկարացման համար։

Ամսագրում տրվում են ամեն տեսակ տեղեկութիւններ բժշկական աշխարհից, օգտակար խորհուրդներ, զանազան տնային դեղեր և այլն... Բաժանորդներին տրվում են մանրամասն տեղեկութիւններ, հիւանդութիւնների դէպքում։

Բաժանորդագրիր կէս տարվայ համար 1 ր. հետեւեալ պրեմիաներով՝

1) Տաբէլ-օրացոյց-բժշկարան 1914 թ.
2) Բազմաձնութիւն, արուեստական ամլութիւն և հակաբեղմնաւորական միջոցներ.
3) Волосы (մազերի և գլխի մաշկի հիւանդութեան գրքոյկ).

Բաժանորդների հասցէները փոխելը ձրի։

Ապառիկ և վերադիր վճարով բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

Հասցէն՝ Тифлисъ, Вознесенская № 8. Ред. «Журналъ-Лечебникъ».

Անցեալ 1913 թ. «Журналъ-Лечебникъ»-ի բոլոր համարները միասին առանց պրեմիաների արժէ 1 բուբ.։
(օ. մ.) 653. 10—6

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՊԱԿԷ“

յայտարարում է ի գիտութիւն ճանապարհորդների և ապրանք ուղարկողների, որ Ընկերութեան շոգենաւ «ՊՐԻԺԻ» (նաւապետ Միդրէսկի) մեկնում է Բաթումից Մարսէյլ, հանդիպելով Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս

Հինգշաբթի, յուլիսի 17-ին (յուլիսի 30-ին Ն. տ.) 1914 թ.

Տեղեկութիւնների համար խնդրում են դիմել Ընկ. Թիֆլիսի գործակալ պ. Ս. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆԻՆ, իր գրասենեակում, որ գտնվում է Արմենական բաղարում՝ Գոստինի դվոր Մանթաշեանների։ Հերաթօս № 7—21. 25—17
22.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный